

Տարեկան գինը 10 ռուբլի: Կէս տարեկանը 6 ռուբլ. Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисть, Редакция „Мшакъ“. Կամ Tiflis, Rédaction „Mschak“. Տ է Լ է ֆ օ ն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Նմազարութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամէն լիզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ. Տ է Լ է ֆ օ ն № 253.

«ՄՇԱԿ» ԼՐԱԳԻՐԸ

Յունիսի 1-ից մինչև տարվայ վերջը կարժենայ ՎՃՅ ռուբլի:

Դիմել Тифлисть, редакция „Мшакъ“.

Այն անձինք, որոնք վճարել են մինչև յունիսի 1-ը և ցանկանում են շարունակել լրագիր ստանալը, թող հոգ տանեն վաղորօք յայտնելու այդ մասին խմբագրութեանը, որպէս զի լրագրի առաքումը չընդհատվի:

Մէկ ամսով բաժանորդ գրվել ցանկացողները վճարում են Մէկ ռուբլի:

Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունվում:

ԲՈՎԱՆԻ ԴԱՅՈՒԹԻՒՆ

Լազուրի թերակղզում.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մասնագրութիւն. Դարձեալ համարաշրջան մասին. Նամակ Մօսկվայից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԼԱՕԴՈՒՆԻ ԹԵՐԱԿԱՐԶՈՒՄ

II

Ներկայ յունիսին տեղի ունեցած պատերազմական ընդհարումների ընաւորութիւնը դեռ չէ պարզված բոլորովին: «P. C.» լրագիրը ենթադրութիւններ է աւելում, որ վերջերս մեծացել են եւսպոնական ուժերը: Յունիսի 1-ին, ինչպէս հաղորդեցին պաշտօնական հեռագիրները, պատերազմը նպատակաւոր էր ուսուց բանակի համար և նա, ոչ մի զինուոր չանկալով յետ մղեց եւսպոնական երկու զորաբաժնի յարձակումները: Մակայն միւս օրերում, ինչպէս յայտնեցին հեռագիրները, տեղի ունեցան աննպատակ դէպքեր:

Պէտք է ենթադրել, որ եւսպոնացիները կարողացել են ստանալ ուժգին օդուժութիւն: Դեռ սրանից մի քանի ժամանակ առաջ Օկուի զօրքի հրահրային ծայրը այնքան թոյլ էր, որ նա չէր դիմանալով ուսուց զօրքի առաջխաղացութեանը, զիջեց իր գրաւած բոլոր դիրքերը և վաճառեց իր զորքի յետ նահանջեց դէպի հարաւ մինչև վաճառեցին: Իսկ այժմ նոյն եւսպոնական զօրքը նորից դէպի հրահր է շարժվում այնպիսի մեծ ուժով, որ հասարակութիւնն ունեցաւ ուղարկել ուսուց զօրքի ձախ թևի դէմ երեք զօրաբաժին: Միևնույն ժամանակ Նօղդուի զօրքը գրաւել է Սիւլան քաղաքը, որ նշանաւոր պատերազմական մի կէտ է և գտնվում է Գալաթիայի և Գայլիսի միջև:

Սիւլանից մինչև Գայլիս ուղիղ զոռով 160 վերստ է: Սյդքան է և այն տարածութիւնը, որ կայ ուսուց հարաւային դիրքերից մինչև Գայլիս: Իսկ Գայլիսը գտնվում է այն ճանապարհի վրա, որով ուսուց զօրքը, հարկը պահանջած ժամանակ, կարող է յետ նահանջել հարաւից դէպի հրահր: Սայլան և Լաօեան: Գուցէ եւսպոնացիները զօրք են դրել հետեւալ չար դիտաւորութիւնը: Ծառայելով դէպի հարաւ, եւսպոնացիները թերեւ ցանկութիւն են ունեցել հրապուրել ուսուց զօրքերը՝ շարժվելու դէպի հարաւ, որպէս զի յետոյ հեղուկութեամբ կարող լինեն կարել նրա կապը Գայլիսի հետ:

Եւսպոնացիների զօրքնաճած յարձակութեան շարժումները կարծես անխաղաղ են, որ այդպիսի մի ծրագիր գոյութիւն է ունեցել և նա կիսով չափ աշոգութիւն է գտել, որովհետև Սիւլանից դէպի Գայլիս առաջ են գնացել եւսպոնական զօրքի մեծ զննքը՝ կարեւոր ուսուց զօրքը: Դա մի ենթադրութիւն է և միայն նախադրյն հեռագրական հաղորդագրութիւն:

ները ցոյց կը տան, թէ իսկապէս ինչ է կատարվել Լազուրեան թերակղզու պատերազմական բեմում:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Տ Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն

«Հայաստանից եկեղեցու պատկերայագրութիւնը» պատմական տեսութիւն. աշխատութիւն Արիստակէս Եւսեփովիչի Սեղրակեան. Մասն առաջին. Մ. Գ.—ըրբ, 1904 թ. գինն է 1 ռ. 50 կ.:

«Մշակը» մի քիչ ուշացրեց սրբազան Սեղրակեանի այս նոր աշխատութիւնը մասին իր քննադատական տեսութիւնը. պէտք էր ուշի ուշով կարգաւ այդ առումը, 470 մեծ էջերից բաղկացած դիրքը, որ մի նոր ապացոյց է տալիս հեղինակի գրական հմտութեան, եռանդի և տոկունութեան մասին: Գրքի վերնագիրը սկզբից դարձեցրեց մեր մէջ, ինչպէս դարձեցրել է, երևի, և շատերի մէջ, այս հարցը: «Բնիչն է ստիպել Արիստակէս արքեպիսկոպոս Սեղրակեանին տարիներով աշխատել, ուսումնասիրել մի այնպիսի մասնաւոր և անշահեկան հարց, որպիսին է պատկերայագրութիւնը հայոց եկեղեցու մէջ, այն ևս մեր այժմեան ժամանակում, XX-րդ դարում, երբ այդպիսի նպատակներն հրոնակալ հարցերը որ և է հետաքրքրութիւն չեն կարող յարուցանել: Սակայն վաղաժամ կը լինէր այդպիսի եղբայրացիութիւնը. ուշադրութեամբ կարդալով Սեղրակեանի սրբազանի երկամբութիւնը, մենք տեսնում ենք, որ դա մի կարևոր և հմտալից ուսումնասիրութիւն է մի ինչպիսի, որ մի ժամանակ անպիսին տեսական և գործնական նշանակութիւն է ունեցել, որ նա բաց է անում մեր առաջ ընդհանրական եկեղեցու և, ի մասնաւորի, հայոց եկեղեցու պատմութեան մի հետաքրքիր էջը:

«Պատկերայագրութիւն» և «պատկերամատուցութիւն»—անա մէկն այն մեծ կրօնական խոսովութիւններից, որոնք յուզեցին ամբողջ բրիտանական աշխարհը, մասնաւոր արեւելիան եկեղեցին և տեղեցին աւելի քան հարիւր տարի, որովհետև այդ խոսովութիւնները, պատճառ դառնալով նոյն կիսովի արեւելահղութիւնների, սկսվեցին VIII դարի 20-ական թվականներին և վերջացան միայն IX դարի 40-ական թվականներին:

Բրիտանական եկեղեցու մէջ մինչև VIII դարը լաւ չէր պարզված այն հարցը, թէ պէտք է արդե՞ծ յարգել տուրքերին և պատկերները, թէ ևս սրբերի պաշտամունքը և պատկերայագրութիւնը լայն կերպով տարածված էր ժողովրդի մէջ. այդ անորոշութիւնը մի կողմից, միւս կողմից բնականապէս կայրներին նոր քաղաքականութիւնը առաջ բերին պատկերամատուցական խոսովութիւնները, որոնք տեղեցին հարիւր տարուց աւելի և զղրեցրին ամբողջ արեւելքը: Այդ քաղաքականութիւնը, որ սկսեցին վարել Բաղաթայի կողմից հարստութեան կայսրները—Լեոն III, Կոնստանդին Կոմնենոսը, Լեոն Կոյալ և Լեոն V հայը, կայանում էր նրանում, որ այդ կայսրները առանձնապէս աշխատում էին տարածել բրիտանականութիւնը հրէաների և մուսուլմանների մէջ, բայց այդ նպատակին հասնելու մեծ խոչընդոտ էին համարում պատկերների և տուրքերի յարգումը, որովհետև պատկերայագրութեան պատճառով հրէաները և մուսուլմանները համարում էին բրիտանականութիւնը կոպակալութիւն: Լեոն ունեցաւ հոգեւորականութեան և արքունիքի մէջ կուսակիցներ և հակառակորդներ, ուստի և առաջ եկան «պատկերամատուց» և «պատկերապաշտներ»:

Լեոնի մասնակցեցին և Հուսի մզապետը, իբրեւ հակառակորդներ. աւելցրին, բանաբարներ, եկեղեցական ժողովներ, հալածանք, բանտարկութիւն, արեւելահղութիւն յաջորդեցին իրար. ամբողջ երկիրը ծփում էր խոսովութիւնների մէջ, մինչև որ 842 թվին Թեոփոս կայսրահին, որ խնամաւարութեամբ էր անչափաւոր Միքայել III կայսրի գլուխները նոր եկեղեցական ժողով, որ վերա-

հաստատեց վերջնականապէս պատկերայագրութիւնը:

Եւ մինչ բնականապէս կայսրութիւնը ամբողջ հարիւր տարի զբաղված էր պատկերամատուցութեան և պատկերայագրութեան խնդրով, արարները աշոգութեամբ առաջ էին տանում իրանց արշաւանքները և նուաճումները:

Արիստակէս սրբազանը համառոտաբար է անցնում ընդհանրական եկեղեցու մէջ տեղի ունեցած այդ խոսովութիւնների պատմութիւնը, որ ամբողջ գործի մէջ—369 էջ բացի ծանօթութիւններից—գրաւում է միայն 52 էջ. իր ուսումնասիրութեան գլխաւոր առարկան հեղինակը դարձրել է այս հարցը. «պատկերների յարգումը ե՞րբ և ո՞րպիսի ընդունվելու էր զգե՞լ Հայաստանից եկեղեցու»:

Եթէ ի նկատի ունենանք, որ հայերը շարունակ, իրանց պատմական կենսից բաղկացած ընթացքում չիմել են մուսուլմանների և հրէաների հետ և նոյնպէս ենթարկվել վերջինների կողմից մեղադրութեան կոպակալութեան մէջ, իբրեւ պատկերայագրողներ, եթէ ի նկատի ունենանք, որ պատկերների յարգումը, օրհնութեան, օծման, ինչպէս և սրբերի պաշտամունքի հարցերի վերաբերմամբ որոշ, պարզ կանոնական բացատրութիւններ չէր կան հայոց եկեղեցու վարդապետութեան մէջ (պատկերների օծումը նոյն իսկ, շատ յետագոյն ժամանակի գործ է), ունեց պէտք է ընդունենք, որ այդ հարցերի ուսումնասիրութիւնը կարող է բաւական մեծ լոյս սրբունել հայ եկեղեցու և նոյն իսկ հայ ազգի պատմութեան վրա:

Արիստակէս եպիսկոպոսի յարուցած խնդրերը մէկն է այն խնդիրներից, որոնք մնալով առանց ուսումնասիրութեան, տեղի են տուել տարակուսութիւնների, թերեմայութիւնների և հակասական կարծիքների հայոց եկեղեցու վերաբերմամբ, մասնաւոր օտարազգի հեղինակների մէջ: Յոյց տալ որն է ուղիղ և անվիճելի—անա հեղինակի նպատակը, բայց դրա համար—ասում է նա—պէտք է առաջ լինի, քանի արտայայտված բոլոր կարծիքները և ապա զալ մի որոշ եղբայրացութեան:

Եւ ներկայ գրքը կազմում է հեղինակի աշխատութեան միայն առաջին մասը, որտեղ նա մանրակրկին ըննութիւն է ենթարկում արտայայտված բոլոր կարծիքները, եկեղեցական գրքերի մեկնութիւնները, յիշատակելով ամենայն բարեխղճութեամբ աղբիւրները և ապա համեմատական գնահատութեան ենթարկելով ամբողջ ուսումնասիրութիւնը: Մընում է եղբայրացութիւնը, որի հետ, երևի, սրբազան հեղինակը կը ծանօթացնէ մեզ իր աշխատութեան երկրորդ մասի մէջ:

Եւ արդէն այդ առաջին մասը առատ, ճոխ նիւթ է հայթհայթում հայոց ազգային և եկեղեցական պատմութեան համար և հետեւաբար, զուր չէ տրեւել ամբողջ տարիներ սրբազան հեղինակը այդ ծանր աշխատութեան վրա:

Հ. Ա.

Ն ո Ր Ա տ ա զ վ ա ծ գ ր ք ե Ր.—1) «Հայաստանից եկեղեցու Պատկերայագրութիւնը» պատմական տեսութիւն, աշխատութիւն Արիստակէս եպիսկոպոս Սեղրակեանի, մասն առաջին, Պատկերներ, 1904, գինն է 1 ռուբլի 50 կոպէկ: 2) «Հրաշալի Դար», 19-րդ դարի դրական և բացասական կողմերը, պրօֆ. Ռ. Ա. Ըօլլէսի, թարգմ. Ստ. Լիսիցեանի, Թիֆլիս, 1904 թ. գինն է 80 կոպէկ: 3) Ա. Տ. Դագաշիան «Полный Русско-Армянский словарь» 5-и выпусков, Тифлисть, 1904 թ.: 4) «Թարգմանական Գրադարան», Մաքսիմ Գորկի, Պատմաւարներ, ա. գրքերի, թարգմ. Զամբաղեան, Թիֆլիս, 1904 թ. գինն է 20 կ.: 5) «Վարդունի», Ն. Շահմազեանի, Թիֆլիս, 1904 թ. գինն է 3 կոպէկ: 6) «Հայրենասէր Իտալացին», Մաքս Զօրգուտի, թարգմ. Լ. Բաբայանի, արտադրած «Մուրճ» ամսագրից, Թէհրան, արագատիպ տպարան «Փարոս» 1904 թ., գինն է 10 շահի: 7) Գիւղատնտեսական Գրադարան, հրատարակութիւն Յ. Արամեանի № 8. «Հարուստիւն Կաթնատուներ», Գ. Մեծատուրեանի,

Պատկերներ, 1904 թ. գինն է 15 կ.: 8) «Գերեզմանատուն» (էպիգր.) Ռ. Նուսիկվաճէի վրաց. թարգ. Լ. Կ., Թիֆլիս, 1904, գինն է 3 կոպէկ: 9) «Անհունի էջերում», Հ. Համբարձումեանի Ս. Պատկերներ, գինն է 60 կոպէկ: 10) «Նոյր Բարին», քերթում, Մ. Աւետիսեանի, Բագու, գինն է 10—11) «Փուլտօն և Ստեֆանոս», փոխադրեց Ն. Չիլիպեանի, Թիֆլիս, գինն է 15 կ.: 12) «Բ. Կարա-Մուրզա» (նրա կեանքն ու գործունէութիւնը) 1854—1902, Յ. Կարապետեանի, հրատ. Գ. Մէլիք-Կարապետեանի, № 5, Թիֆլիս, գինն է 60 կ.: 13) «Вопросу о гниении торпыхъ мостовыхъ, А. И. Хатицова, брошюра. 14) «Բիւրդ Պէկ», գ. հատորիկ Մ. Տ. Շուտ, Պարիզ, 1903, գինն է 40 կ.: 15) «Երեսնամեակի հայոց Պատկերներ» Յ. Տէր-Արիստակէսեանի, Մօսկվա, 1904 թ., գինն է 20 կ.: 16) «Իմ Ուղեկիցը», Մաքսիմ Գորկի, թարգմ. Ա. Աթաբեկ. արտադրած «Մուրճից», Թիֆլիս, 1904 թ. գինն է 10 կ.: 17) «Կուրթեան Պատմաւարներ» թ. Բ. Օհանեանի (արտադրած «Մշակ»-ից, Բագու, 1904 թ. գինն է 30 կոպէկ: 18) «Դարվիշիկ», կազմեց Ս. Բալաբեկ, հրատ. Գ. Կաթնասեանի, Թիֆլիս, 1904 թ. գինն է 50 կ.: 19) «Հայոց Նոր Վիշնիկ» (1155—1843), գիտական հրատարակութիւն, աշխ. Յ. Մանանդեանի և Հ. Աճառեանի, Վաղարշապատ, 1903 թ. գինն է 3 ռուբլի: 20) «Մաղաղատիւն և Կախարդութիւն», թ. Մ. Բուրդուղեանի, Պատկերներ, 1904 թ. գինն է 20 կ.: 21) «Մտերմական Ողորդութիւն Պատմաւարներ» թ. Մ. Բուրդուղեանի, Պատկերներ, 1904 թ. գինն է 20 կ.: 22) Մեր էժանագին գրադարան, (հրատ. տիկին Զարեկ), «Ճշմարիտ Մեծութիւնը» (արեւելեան աւանդութիւն), Ս. Պատկերներ, 1904 թ. գինն է 7 կոպ.: 23) «Հանդէս Հայալիւրդութեան», Բ. հատոր, 4-րդ գիրք, Մաքսիմ Գորկի, 1904 թ., 24) Մեր էժանագին գրադարան (հրատ. տիկին Զարեկ) «Բարը երգում է», կովկասեան լեզուագիտ. փոխարկութիւն Յ. Գուրբախեանի, Պատկերներ, 1904 թ. գինն է 10 կ.: 25) «Որոշման Յանդիկներ», կազմեց 3 գործ. Վ. Տիրացեանի, Թիֆլիս, 1904 թ. գինն է 30 կոպէկ: 26) «Բանաստեղծութիւններ» Ս. Մարգարեանի, Բագու, 1904 թ. գինն է 30 կ.: 27) «Կնոյ Պայտերներ», պատմաւար Մաթիլդա Սեբասթի, թարգմ. Գ. Բարդուղեանի, Թիֆլիս, 1904 թ. գինն է 3 կ.: 28) «Անհուն», կրդ Միքայել Մարկիանցի, Թիֆլիս, 1904 թ. գինն է 10 կ.: 29) «Татарка», комедия въ 2 дѣйств. Զ. Суганова Զրиван, 1904 թ., 30) «Կարեւոր էլ այստեղ էլ», Մ. Զաքարեանի, Պատկերներ, 1903 թ. գինն է 10 կ.: 31) «Ով որ վերջ ունի, նա էլ երգ ունի», Միք. Բարդուղեանի, Թիֆլիս, 1904 թ. գինն է 15 կոպէկ: 32) Компер—Ж. Ж. Руссо, переводъ Перлова, Москва 1903 г. пѣна 40 к.: 33) «Լուսաբեր», գրական հաւաքածու ի յիշատակ Ս. Էջմիածնի 1500-ամակի, պրկալ ա. Նիկոսիա (Գիւրգոս), 1903 թ. գինն է 60 անու. 34) «Ժամանակը ոսկի է», Հօֆմանի, փոխադր. Ս. Բանալեանցի, Թիֆլիս, 1904 թ. գինն է 40 կ.: 35) «Վամպիրների գոհ», Յ. Մուսիկանեանի, Բագու, 1904 թ. գինն է 5 կ.: 36) «Կրօնի պատմութիւն» Ա. Մէլիքի, թարգմանութիւնն ուսական թարգմանութիւնից էմ. Բ. Զաքարեանի, Ալեքսանդրօպոլ, 1904 թ. գինն է 1 ռ. 25 կ.: 37) «Լեզուի հարցը», ա. մաս. էմ. Զաքարեանի, Մօսկվա, 1904 թ. գ. 40 կ.: 38) «Անգլիայի քաղաքական և հասարակական կեանքը», Հանրապետական գրադարան Հ. Առաքելեանի, № 6, Թիֆլիս, 1904 թ. գ. 15 կ.: 39) «Росколюн Հեթանոս», տանկերից հանդէս փոխադրեց Միքայել Տարաբի, հրատ. Գ. Բարդուղեանի, Թիֆլիս, 1904 թ. գ. 30 կ.: 40) «Արեւելիկ Զատիկ», պատկեր Յ. Եսայեանի, Թիֆլիս, 1904 թ. գ. 3 կ.: 41) «Իսլամականութիւն» իշխան Ա. Սումբատովի, թարգ. Զալալ Տէր-Գրիգորեանի, հրատ. «Աղբիւր-Տարագի» № 65, Թիֆլիս 1904 թ. գ. 50 կ.: 42) «Отчетъ Комисіи по устройству противу туберкулезной выставки д-ра Ф. М. Блюменталъ», 43) «Рѣчь произнесенная предст. Имп. Кавк. Медц. Общ. С. І. Анаповымъ 24 Апрелья, 1904 г., 44) «Изъ Абастумана Доктора А. Бабаиана, Писма 1, 2 и 3», 45) «Մայրը և ուրիշ զրոյցներ», Վ. Հիւլօի, թարգ. Գ. Բարդուղեանի, Թիֆլիս, 1904 թ. գ. 7 կ.: 46) «Երեք Մոգեր», Ուսուցիչի, փոխ. Յ. Կարապետեանի, արտադր. «Աղբիւրից», Թիֆլիս, 1904 թ. գ. 10 կ.:

ԳԱՐՁԱՆԱԼ ՀԱՄԵՐԱՇՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ (Նամակ երկուսից)

II

Ի՞նչ ունենք մենք միմեանց դէմ, ի՞նչ ունենք

մեր մէջ կիսելու», անա այն ընդհանրացած խօսքերը, որոնց կարելի է հանդիպել հայ և թուրք ժողովրդների գիտակցի և հասկացող շրջաններում, երբ խօսք է լինում, ամեն անգամ, այլացել է այլաբանական գիտելիքների մասնաւորացման հայերի և թուրքերի համընդհանրութեան մասին: Մենք դարձրելով միասին ապրած, միասին մեծացած ժողովուրդներ ենք, դրացիական կապերը, տնտեսական փոխադարձ շահերը այնպէս մէջ բերել և շարժապէս են միմեանց, որ դրա դէմ գնալը, թշնամական յարաբերութիւններ ստեղծելը առաջ կը բերէր մի շարք բարդութիւններ, որոնցից հաւասարակէս կը տուէին երկու կողմերն էլ: Այսպիսի խելացի դատողութիւններ հազուադէպ չեն այժմ, որոշ շրջաններէ մէջ: Այս ճիշդ է, երկու թուրք ու բալթիկ միասնական, բայց ոչ այնպիսի ծաւալով, որ հնար լինէր երկու թիւն ընդհանուր բնաւորութիւն տալ, և սփոփանք գտնել այն յոյսերի մէջ, թէ տգիտութիւնը, թիւր հասկացողութիւնը շուտով տեղի է տալու առողջ մտքի, ուղիղ մտածողութեան: Ընդհանուր երկու թիւն իր բացասական կողմերով, որպէս իրողութիւն, մնում է մեր առաջ ցցված և նրա լուծումն պահանջում է շատ և շատ ջանք ու աշխատանք մեզանցից:

Ժողովրդի շատ չնչին—այն է 10%-ը փոքրամասնութիւնը, ապրելով քաղաքներում, շրջիկով արտաքին աշխարհի հետ, հնարաւորութիւն ունենալով կրթութիւն ձեռք բերել և մի փոքր լայն աշխարհայեացք կազմել իրենի վրա, եկել է վերջապէս այն ուղիղ եզրակացութեան, որ առանց համընդհանրութեան, առանց դրացիական, բարեկամական կապերի չը կայ մի երկրի մի կամ մի քանի ժողովուրդների համար բարեկեցիկ կեանք՝ վերաբերէ նա տնտեսական թէ բարոյականին: Միջնորդ մասան, ժողովրդի անապին մեծամասնութիւնը, ապրելով գիւղում, մտաւոր կենտրոններից դուրս, իր հասկացողութիւններով ներկայացնում է մի այնպիսի անշարժութիւն, որին շատ ու շատ ծանր է միանգամից ըմբռնել խնդիրը, որքան էլ նա պարզ լինէր: Նա թուրք է՝ աւազակ է, գող. նա հայ է՝ մուխտար է, կեղծող... անա այն փոխադարձ անուանարկութիւնները, որոնք կազմելով ատեղութեան հիմքը, դրա վրա կառուցվում են թշնամութիւնների և երկպառակութիւնների շնորհիւ:

Այս կանխակալ հակակրօնների շուրջը ընդհարվում են տնտեսական խնդիրները, բարոյական հարցերը: Թե՛նչի շրջից օգտվի թուրքը, Թե՛նչի լաւ հողը բաժին ընկնի հային: Թե՛նչի գալական թուրք լինի, Թե՛նչի միջաբեր հայից ընտրվի: Եւ անա իւրաքանչիւր մասն օրինակ մի դէպք առիթ է դառնում տգէտ ամբողջի, խաւարի մասսայի անհամբերողութեան, կուպիտ եւսամոլութեան արտայայտվելուն, և թըշնամութիւնն ու ատեղութիւնը պատրաստ են:

Այստեղ բացակայում է միտքը, չէ գործում խելը: Իրենի ու երկու թիւնը մնում են չը բացատրված, մասսան կազմում է այդ բոլորի վրա մի այնպիսի սոսկալի հասկացողութիւն, ուր երեւան է գալի կուպիտ ուժը և սուրը, որպէս խնդիր լուծողներ: Եւ երբ մի ժողովուրդը այնպէս է տրամադրված, հեշտ է նրա ձեռքով առաջ բերել շարժումներ նոյն իսկ իր նոյն հասարակութեան համար:

Եղէք մի փոքր չարախնդաց մարդ, ծեծք հրէշաւոր, չարամիտ խորհուրդներ, երբ ձեռք խայտառակ գոյուրթիւնը պաշտպանելու համար կարելի լինի ներքին գոտուրթիւն ցեղային թշնամանք, բաւական է, որ ազէտ մասսային մէջ բաց թողնէք մի սուտ լուր, կամ փափսանք մի քանի տգէտ ականջներին, որ հայերը զինվում են թուրքերի վրա յարձակելու համար, կամ թուրքերը պատրաստվում են հայերին կուտորելու, որ իսկույն այդ բանը բերնէ բերան անցնելով՝ ստեղծէ մի լարված դրութիւն: Մասսան այլ ևս ընդունակ չէ սուտը ճշմարտութիւնից դատելու, ձեռք չարամիտ խորհուրդները ըմբռնելու, նա արդէն գործի է անցնում և այդ տրամաբարութեամբ արտայայտվում:

Անա չարիքի այն բունը, որ պիտի քանդէր բաւական չէ դեռ ևս, երբ համընդհանրութեան բարիքը, դրացիական և բարեկամական կապերի փրկարար հետևանքները հասկանա անհամար կամ մի ուրիշ շրջան, դրանով հարցը չի լուծվի: Հարկւում է մասսային, ժողովրդին քարոզել, նրան հասկացնել, նրա մտածողութիւնը, նրա ընթացքը ուղղել: Իսկ ալ անելու համար բարոյական պարտքը ծանրանում է այդ հասկացող, գիտակցի փոքրամասնութեան վրա, որի ձեռքով գտնվում է նաև տպագրական խօսքի ոյժը:

Թող դուրս գայ այդ հասկացող փոքրամասն-

նութիւնը ժողովրդի մէջ, խօսէ մասսայի հետ, օրինակ հանդիսանայ նրան, գործով ցոյց տալ համընդհանրութեան և դրացիական կապերի բարեբար հետևանքները, այն ժամանակ միայն կարելի է յուսալ մի բան, այլապէս չարիքը կը մնայ չարիք և նա կը քայքայէ մեր ժողովրդի տնտեսական վիճակը:

Ա.-Դ.Յ

ՆԱՍՏԱԿ ՄՈՍԿՎԱՅԻՑ

Մայիսի 28-ին

«Մշակի» № 105-ում մի լուր կարգացի, թէ խաչիկ վ. Դատեանը իրաւունք է ստացել Կայսերական Հնագիտական Յանձնաժողովից՝ հրահանգիտական պեղումներ կատարելու Վաղարշապատի, Դուրի, Անիի, Երեւանի, Կարսի գաւառներում և այլ ուր: Կատարեալ աշխատութիւն ցանկալով Ձուարթնոց եկեղեցու պեղումների ձեռնարկող վարդապետին, կը կամենայ իմանալ՝ թէ արդեօք մեր պիտի ամփոփվեն ու պահվեն պեղումներից ստացած, և գտնված հնագիտական իրեղէնները: Յանկալի էր տեսնել նրանց անուշտ էջմիածնի, սրանից 8—9 տարի առաջ կառուցած, թանգարանում: Պէտք է յայտնեն, որ իշխան Գօրնիշիչեւ-Կոստոլովը ուսուց Հայաստանում ճանապարհորդելու միջոցին շատ հնութիւններ էր գտել, որ մասալի էր քանակ տալ Ս.-Պետրբուրգ էրմիտաժում գեոեղելու: Իշխանը վերադառնալով Պետերբուրգ, արդէն մի առանձին թուղթ էր պատրաստում, ուր հարկն է դիմելու համար այդ առիթով. բայց ինչ-ինչ պատճառներից գործը անկախ էր մնացել:

Ներկայ մայիսի 26-ին Մոսկվայից դէպի Անդրկովկաս անցաւ պրօֆէսոր Ն. Մառը Անի քաղաքում և Արտանուշում պեղումներ կատարելու համար: Նա յայտնեց, թէ Կայսերական Հնագիտական Յանձնաժողովը նրան մի փոքրիկ դրամար է տուել մի պարզ, հասարակ շէնք շինելու, ուր պիտի ամփոփէ գտած հրահանգիտները: Այս խօսքերը առիթ են տալիս ինձ մի քանի խորհրդածութիւններ անելու:

Էջմիածինը իր բազմաթիւ միաբանների հետ հողեր և մասամբ գիտական ու կուլտուրական շահերի ներկայացուցիչն է. միաբանութեան մէջ արդէն կան մի քանի լուսաւորեալ և գրականութեան և բանասիրութեան մէջ աշխուժանող անձինք, որոնք չեն կարող և իրաւունք էլ չունեն անտարբերութեամբ վերաբերվել դէպի իրանց բարոյական պարտականութիւնը: Մինչև այժմ էջմիածինը իր մօտ էր գրաւում եւրօպացի գիտականներին իր հարուստ մատենադարանի հին ձեռագիրների շնորհիւ. բարի մարդիկ խորհուրդ են տուել էջմիածին միաբաններին թանգարան ևս շինել, և թանգարանը պարտաւոր է, բայց ինչն էլ են զարդարում այնտեղ թանգարանը, մատենադարանից դուրս հանած տպագրված գրքերով, ինչպէս ինքս անձամբ տեսայ 1896 թուին, երբ առաջին անգամ եկել էի էջմիածին: Գրքերը պէտք է յետ տանել իր տեղը՝ մատենադարան: Իսկ թանգարանը յատկացնել իր նպատակին: Անա առիթը ներկայանում է ձեռնացնելու նոր թանգարանը գուտ հնագիտական առարկաներով: 1) մի կողմից Գեորգ IV կաթողիկոսի շինած աղբաւորի թանգարանից տեղափոխել նոր շէնքի մէջ այն բոլորը, ինչ որ հնարաւոր է: 2) Ձուարթնոց եկեղեցու պեղումներից ստացված արդիւնները—հնութիւնները, 3) Դատեան հօգ ապագայում գտանալիքները: 4) խնդրել պրօֆէսոր Մառի աշխատութիւնը:

Բացի դրանից կան նաև ուրիշ միջոցներ թանգարանը հարստացնելու համար: Այստեղ էս առիթով չեմ համարում օրինակ բերել Յուդաստանը իր Աթէնք քաղաքապետով: Յուդաստանը շատ հարուստ է հնութիւններով, որ հողի տակին են. և նա ներթափանց միջոցներ պահպանութեան պատճառով թէ և ինքն անձեռնհաս է այդ հնութիւնները լոյս աշխարհ հանելու. սակայն այդ հանգամանքը նրան չէ արգելում Աթէնքի թանգարանը անդադար հարստացնելու: Այդ Բնչպէս, կը հարցնէ ընթերցողը. անա ինչպէս: Եւրօպացի հնագէտները օժտված իրանց տէրութիւնների կողմից մեծ գումարներով, գալիս են Յուդաստան պեղումները կատարելու: Յունաց կառավարութիւնը տալիս է նրանց իրաւունք պեղումներ կատարելու միայն մի պայմանով. պեղումների ժամանակ գտնված բոլոր հնութիւնները յանձնել Աթէնքի թանգարանին. օրէնքը արգելում է յունաց սահմաններից դուրս արտահանել հնութիւնները, ծախել կարելի է միայն այնպիսի հնութիւնները, որոնցից կան մի քանի օրինակներ: Եթէ այս պայմանները

ու. և ինչ ծանր են թուում, յոյները պատասխանում են, բարեհաճեցէ շինել ձեռ յատուկ թանգարանը միայն յունաց հողի վրա, կարգեցէ կառավարչներ ձեռ հնագէտներից: Եւ այսպէս եւրօպացի ազգերից մի բանիսը ունեն իրանց ուրոյն թանգարանները Յունաստանում: Եջմիածինը էլ էջմիածինը այլ պայմանների մէջն է գտնվում. նա չէ կարող բռնի հարկադրել պեղումներ կատարող եւրօպացիներին իր թանգարանին յանձնել նոր գտնված հնութիւնները. բայց դա կարող է յայտնվել իր բարոյական մի ցանկութիւն: Իսկ որ շատ կարեւոր է, նա պէտք է կարողանայ ինքը իրապէս գործել թանգարանի ձեռնացման հարցով և յանձնէ նրա հսկողութիւնը մի թանգարանապետի, որպիսին կարող է լինել ինքը հ. Դատեանը:

Մ. Շովրեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ

«Մշակի» ներկայ համարի հետ Ռուսաստանի մեր բաժանորդներին ուղարկվում են բըժշկապետ Ս. Մայսուրեանից կազմած «Խրատ» ակամբի, բիւի, կոկորդի եւ քիի հիւսանդուրիս ունեցողներին: Թերթը իրաւունք կազմված են ամփոփ ոճով և դերամատիկ լեզուով և ցուցումներ են տալիս այն նախապահպանողական և առողջապահական միջոցների մասին, որոնցով պէտք է զերկաւարվել յիշված հիւսանդութիւնների դէմ մաքառելու համար մինչև բժշկին դիմելը: Անկասկած այդպիսի տեղեկութիւնների տարածելը ժողովրդի մէջ օգտաւէտ է և նպատակայարմար:

Թիֆլիսի պատաստան կից խնայողական արկղի կառավարիչ պ. Ա. յունիսի 8-ի առաւօտեան յանձնում է ծառային մի փակ ծրար 1,914 ռ. 75 կ., որ տանի ներսի սենեակը, տայ այնտեղի պաշտօնեային: Երկար սպասեւելոց յետոյ, տեսնելով որ ծառան չէ վերադառնում, Ա. գնում է ներսի սենեակը, տեսնում է, որ այնտեղ էլ չը կայ, մտնում է ծառայի սենեակը: Այդտեղ նա գտնում է յատակի վրա պատնոտված ծրարը, դուրսմնանքը և բոլոր թղթերը, բացի դրամից: Մտան Բուրձայիսի նահանգի գիւղացի է, Վարդիմիր Մարչիկիս անունով: Ամբողջ օրը ոտսիկանութիւնը որոնում էր նրան, բայց դեռ չէր գտնվել: Գործը քննվում է:

Ներկայ յունիսի 20-ից Թիֆլիս են հաւաքվել Կովկասի տարբական դպրոցների ուսուցիչները: Նրանք պէտք է գան այստեղ լսելու Ալեքսանդրեան ուսուցչական ինստիտուտին կից բացվելիք ձեռքի աշխատանքի ամբարայն կուրսները: Կուրսերը շարունակվելու են մինչև օգոստոսի 1-ը:

«Прав. Вѣст.» պաշտօնական լրագրքը հաղորդում է, որ Վարշաւայի գեներալ-նահանգապետին Բորձայից թոյլտուութիւն է տրված՝ իրեն ժամանակաւոր միջոց՝ 3 տարով Պրիվիլեյանդան երկրում արգելել պատասխան աղանչներ պահել և անցնել:

Մի յատուկ յանձնաժողովը երկար դրադվել է երկաթուղու կայարանների բուժֆաները բարձրաւելու հարցով: Յանձնաժողովը եկել է այն եզրակացութեան, որպէտք է աշխատել բուժֆաները չը տան կապալով՝ ամենից շատ վճարողին, այլ երկաթուղու վարչութիւնին կը կողմից պէտք է յանձնէ այդ բանը ամենից վատահիւլ ճանաչված մարդուն: Միշտ պէտք է վերաբնութիւն լինի ուսուցիչի, ընդգիծելի և սակազնի, որ պէտք է աշխատել՝ հնար եղաձին չափ՝ փոսեցնել տեղական սակազներին. պէտք է խիտ հսկել առողջապահական վիճակի, մաքրութեան վրա, և այլն:

Բագու. և մեքենային գործաքանի վարչութիւնը խնդրել է տաւել տեղական վարչութեանը և քաղաքային խորհուրդին, որ թոյլտուրեն իրան աւտօմօբիլի հաղորդակցութիւն հաստատել թէ քաղաքի և Բիբի-Էյբայի միջև և թէ քաղաքի փողոցներում Հաղորդակցութիւնը ծառայելու է և մարդկանց, և ապրանքների տեղափոխութեան համար:

«Правда» լրագրի խմբագիր պ. Նարոկովը կոչվել է պատերազմի գնալու իրեն պահեստի պրապօրշիկ և, ինչպէս լավում է, նշանակվում է գինւորական դատարանի անդամ մանջուրական բանակում:

«Одесск. Лист.» լրագրի ասկով դերասան

Սօրիսովին արտասահման հեռագիր է ուղարկված, որով հաղորդում են նրան, որ ինքը կոչվում է պատերազմի գնալու իրեն պահեստի բանակի պրապօրշիկ:

ԲԱՅՈՒՅԻՑ մեզ գրում են. «Յունիսի 1-ին, առաւօտեան ժամի 7-ին, քաղաքից երկաթուղի գնացքով ճանապարհվում է իր գործատեղին՝ Բալախանի, Պօղոբէկեան անունով մի պարոն. հազիւ նա կայարանից մի փոքր հեռացած, մի անյայտ չարագործ ատրճանակի մի քանի հարուածով տեղն ու տեղն է թողնում այդ խեղճին և ինքը անյայտանում, որ մինչև այժմ էլ դեռ չէ բռնված. սակայն չար լեզուները շուտով փափում են միմեանց աւանդել, որ այդ սպանութիւնը նորիս կատարված մի այլ սպանութեան վրէժխնդրութեան արդիւնքն է»:

ՇԱՄԱՆՈՒՅԻՑ մեզ գրում են. «Գարգման» և «Աշու» գետակների հեղեղման պատճառով, Բիւրգամիւրից Շամախի տանող ճանապարհի հաղորդակցութիւնը երբեմնայէն ընդհատվում է ու վտանգաւոր է դառնում քաղաքս ամառանոց կողմերի համար: Խեղճերը ստիպված են լինում օրերով սպասել մինչև որ ջուրը պակասի, որպէս զի հնարաւոր լինի անցնել անվտանգ, բայց ի դուր են գործ դրած ջանքերը. շատերը սպասում են թրքաւանի գիւղերում մինչև ջրի բարակելը. պօստն էլ երբեմն ուշ է ստացվում. օրինակ շաբաթ օրվայ պօստը ստացանք կիրակի առաւօտեան ժամի 10-ին: Զրեքը այնքան մեծանում են, որ երբեմն անհարկն է լինում անցնել ամենալաւ ձիերով: Անցեալ օրը երեք սաղիեանցի քաջ ձիււորներ փորձ են անում անցնել, յոյսները ձիերի վրա դրած, բայց այնքան ուժեղ է լինում ջուրը, որ երկուսի ձիերին դուրում է, մէկը ազատվում է իսկոյն, շնորհիւ իր ձիււ, միւսին բռնում է բաւական, որին ընկերները ազատում են մօտաւորապէս մի վերստ հեռաւորութեան վրա, կիսախեղդ ու փրկում մահէից: Պատմում են, որ Գարգման գետակը չափազանց վարարել է, համեմատելով միւս տարիների հետ. այդ գետակը մեծանում է միշտ զանաւոր և ամառվայ սկզբներում, իսկ աւառը համարեա թէ ջուր չէ լինում. այս օրերս մի արժէքաւոր ձի է խեղդել Մատրաս գիւղից: Այդ գետակներից ոչ մէկը են հիմնաւոր կամուրջ չունի, որ ամենահարկաւորն է գարնան ժամանակներում: Գարգմանի վրա մի փայտեայ կամուրջ կար, այն էլ հէնց առաջին հեղեղի ժամանակ է քանդվել»:

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Տիֆլիս Սիրանյոյը շարունակում է Երեւանի հասարակութեան գեղարուեստական ճաշակին բաւականութիւն տալ իր ներկայացումներով: Մայիսի 23-ին ի նպատակ տ. Մայսուրեանի խաղացին Բիբայի «Ծծմայրերը»: Մայիսի 28-ին, դարձեալ նոյն Բիբայի «Կարմիր համազգեստ» գրաւման, որի մէջ շոշափվում է մի շատ ժամանակակից խնդիր: Բայց ամենից հետաքրքրական էր յունիսի 1-ի ներկայացումը, որը նշանակված էր տ. Սիրանյոյի բնեկեցիկին: Ոտք չը կայ, որ շնորհալի գերաստեռնին ընտրած ինչէր իր տաղանդին համապատասխան մի պիես, ուր կարողանար ցոյց տալ իր շնորհը: Եւ նրա ընտրութիւնը աշուղ էր: Ոտքում էին Տիմիտիւկու «Պաշտպան» պիեսը: Յունիսի 3-ին խաղացին «Ջաւակը», որի մէջ տ. Սիրանյոյ դարձեալ հնարաւորութիւն ունեցաւ ցոյց տալ իր շնորհը, Զը մոռանալ յիշել, որ մայիսի 29-ին, շաբաթ օր, ժողովրդական ներկայացումներէ Բիբայի խումբը, այս սեզօնում, տեղից իր երկրորդ ներկայացումը: Խաղացին Տէր-Գրիգորեանի «Պարեգործութեան դիմախի տակը»: Այս երկու թիւն միմեանց անմատչելի են տ. Սիրանյոյի ներկայացումները: Արդեօք լաւ չէր լինի, որ երբեմն երբեմն նոյն ներկայացումը մատչելի գնեքով ժողովրդի համար կրկնվէր երկրորդ անգամ: Արդեօք սա չէր կարելի պարտը համարել»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐԶԸ

Ի՞նչ են ասում Պօր-Արսուրի մասին: «Berliner Tageblatt» լրագրի թղթակիցը հաղորդում է թէ ինչու գեներալ Կուրպատիկը արտակարգ միջոցներ ձեռք չառաւ Պօր-Արսուրի պաշարումը վերացնելու համար: Բան

այն է, որ գեներալ Կուրոպատկինը մի տարի առաջ, դէպի ծայրագոյն Արեւելք կատարած ճանապարհորդութեան ժամանակ, ամենայն ուշադրութեամբ գննել է բոլոր ամբողջականները, մի քանի փոփոխութիւններ և բարելաւութիւններ է մտցրել մարտիկներին սխառութիւններէն անմիջապէս հակոտնելու և հասել է այն համոզմունքին, որ Պորտ-Արտուրը առաջնակարգ բերդ է, որը կարելի է կատարելագոյն անմատչելի համարել: Լաւատեղեակ մարդկանց խօսքերին նայելով, քաղաքը ապահովված է մի ամբողջ տարվայ ուսուցիչների պաշտօններով: Իսկ ավելորդ բաւական է նոյն իսկ մէկ ու կէս տարվայ համար: Մարտիկները և բաւարեանները բարձրութիւնների վրա շինված են այնպէս, որ վերջինի նրանց յարձակումով բոլորովին անկարելի է: Ներկայ ժամանակի բերդապահ զօրքի թիւն է ոչ պակաս 40 հազար մարդուց, այսինքն այն բոլոր զօրքերը, որոնք առաջ տեղադրված էին Լեւոգորոնի թերակղզում, կենտրոնացել են Պորտ-Արտուրում, իսկ այդպիսի բերդապահ զօրքը կարող է աշտարակները պաշտպանել ամեն մի բերդ աշխարհի վրա: (Рыс. Вѣд.)

Եւրոպական լրտեսները դեռ խորքերից հետազոտում են. «Արեւելեան-չինական երկաթուղու վարչութիւնը կայքերի և քաղաքի պատերին յայտարարութիւն չինական, մանջուրական և ուստաց լեզուներով, որի մէջ առաջարկվում է եւրոպական լրտեսներ կամ երկաթուղու գիծը փչացնելու դիտարկութիւն ունեցող չարագործներ բռնելու համար 500-ից մինչև 1000 բուրլի դրամական պարգև, նախած բռնված յանցանքների կարեւորութեան և թէ որքան զօրաւ էր բռնվել: (Т. А.)

Մանրամասնութիւններ Վաթագոուի կուրի մասին: Լօնդոնի եւրոպական դեսպանը հրատարակել է Լեւոգորոնի թերակղզու եւրոպական զօրքերի հրամանատարի հետեւալ գեղարուար յոսիսի 2-ից. «Մեր գլխաւոր բանակը շարժվեց դէպի հիւսիս երկաթուղու երկաթուղիէն: Բաժանվելով երկու զօրատեսներ, նա յետ միեւ թշնամուն այն դիրքերից, որ նա գրաւել էր Վաթագոուի արեւելեան կողմում: Կէսօրից յետոյ ժամի 5-ին Տափան-չին-Լուենօօ գծի վրա ամրացած թշնամին կուրի սկսեց, բայց երկու ժամվայ խիստ հրաձգութիւնից յետոյ մենք գրոհ տալով գրաւեցինք Պոնիատան-Իւլսոնը: Միւս զօրատեսը, որ նշանակված էր թշնամու աջ թևի վրա յարձակվելու և մեր թիւն ու ետեւ պաշտպանելու համար, շարժվեց Փու-Չօնուից՝ դէպի արեւելք և մօտեցաւ թշնամու գծին: Թշնամին զօրեղացրեց իր դիրքը Լուենօօի վրա թարմ զօրքերով: Միւս օրը թշնամու բոլոր ոյժերը Տե-Լիստուի մօտ հասնում էին 2 1/2 դիւիզիայի: Լուսարացին մենք սկսեցինք գրոհ տալ, շարժելով մեր գլխաւոր ոյժերը մի զօրատեսով երկաթուղու երկաթուղիէն մօտ 200 զինուորական կողմից. ժամի 9-ին հասաւ մի զօրատես ձախ թևից, իսկ կէսօրին՝ հեծելազօրքը Չիւանիւն-սոնի կողմից: Այսպիսով, թշնամին շրջապատված էր Տե-Լիստուի մօտ և կատարել կուրից յետոյ նախնայեց դէպի հիւսիս ժամի 3-ին կէսօրից յետոյ: Առաջին հաշիւներին նայելով, մեր կորուստները 1000-ից պակաս են: Որքան յայտնի է, մեր ձեռքն ընկան 14 արագաձիգ թնդանօթներ և մօտ 300 զինուոր, որոնց թըւումն է և 4-ը հրացանաձիգ գնդի հրամանատարը: Պատերազմի դաշտում մնացին 500 սպանված և վիրաւորված ռուսներ: (Р. А.)

Կուրոպատկինը: «Ind. Belge» լրագրին հարգողում են, որ գեներալ Կուրոպատկինը շարունակում է խիստ գաղտնի պահել իր ծրագրերը, ինչպէս այդ եղել է այն ժամանակ, երբ Կուրոպատկին նացիոնալ էր ճալու գետը: Կուրոպատկին արգելել է հեռագրել որ և է բան իր բանակի շարժումների մասին: Թղթակիցները, որոնք գտնվում են նրա բանակում բոլորովին տեղեկութիւն չունեն թէ ինչ է կատարվում: (Н. Ա.)

Դանդաղագոյնութիւն պահանջներ: «Berliner Tageblatt» լրագրի թղթակիցը Տօկիօից բացատրում է պատճառը, թէ ինչու այնքան երկար սպասվող ընդհարումը գլխաւոր զօրաբանակների մէջ մինչև այժմ տեղի չէ ունենում: Պատճառները, գլխաւորապէս, վատ եղանակներն են և անանցանելի ճանապարհները: Կօրէյայի հարդարակցութեան ճանապարհների պակասութիւնը այժմ եռանդով վերացվում է այն միջոցներով, որ ձեռք են առել եւրոպացիները, որոնք շտկում են գոթութիւն ունեցող ճանապարհները, շինում են երկաթուղային գծեր և այսպիսով իրանց զօր-

քերի համար ապահով ճանապարհներ են պատրաստում որ հարկաւոր դէպքում յարմարութիւններ ունենան յետ նահանջելու: (Ноб.)

ԱՐՏԱՐԻՆ ԼՈՒՐԵՐ

—Երէկ մենք հարդարեցինք ֆրանսիական պարլամենտում տեղի ունեցած հայոց հարցի մասին հարցադրումը և արտաքին գործերի մինիստր Դիլկասէի պատասխանը: Այդ առիթով Լօնդոնի «Daily News» լրագիրը հետեւեալ մանրամասնութիւններն է հարդարում: «Այս առաւօտ խորհրդարանում պ. Պրեսանտէն հարցադրում արեց հայկական վերջին կոտորածների առիթով՝ Սասունում: Պ. Պրեսանտէն յայտարարեց, որ ի պահանջը հարկին կարելի է վատանել Անգլիայի և Ռուսիայի անկախութեան մի նաւային ցոյց անելու թիւրք կառավարութեան դէմ, արգելելու համար հայ ազգի շնչումը (բուռն ծափարարութիւններ ձայնալով): Պ. Դիլկասէ, արտաքին գործերի մինիստրը, պատասխանելով պ. Պրեսանտէնին, յայտնեց, որ Ֆրանսիան իր կարողացածի չափով ջանք է գործ դնում Բերլինի դաշնագրութեան 61-րդ յօդուածը իրագործել տալու համար: Ինչպէս Անգլիան և Ռուսաստանը Ֆրանսիան և Սասունում հիւպատոսութիւն հաստատել է: Երբեք պետութիւնների միացեալ գործունեութիւնը յաճախ աջող է եղել Հայաստանում կարգ ու կանոն պահպանելու համար: Յետոյ պ. Դիլկասէ կարգեց պ. Պոլսի ֆրանսիական դեսպանի մի տեղեկագիրը, որի մէջ յայտնված է, թէ այժման դրութիւնը 1894-ի դրութեան չէ նմանում. մի քանի դիւղեր աւերված և բնակիչները կոտորված են, բայց աղէտի իսկական չափը կարելի չէ հաստատել: Ֆրանսիական հիւպատոսի ներկայութիւնը Սասունում իր փրկարար ազդեցութիւնն է ունեցել: Պէտք է սպասենք աւելի մանրամասն տեղեկութիւնների, որպէս զի հարկաւոր եղած քայլերը անենք Բ. Դրան մօտ: Անգլիան և Ռուսաստանը իրանց հիւպատոսներին մի և նոյն բովանդակութեամբ տեղեկագիրներ ասացել են: Պ. Դիլկասէ աւելացրեց. «Թէպէտ և ճշդիւ միջոցներ այժմ չենք կարող գործ դնել, բայց ցաւալի է, որ Բ. Դրան մերժելով մշտնջեն չալաստանում բարենորոգումներ, դնում է հայերին այնպիսի վիճակի մէջ, որ նրանք բացի յեղափոխութիւնից ուրիշ ընտրութիւն չունեն»: Պ. Դիլկասէ խորապէս ցաւելով թուրք զինուորների գաղափարների մասին, յայտնեց, որ ինքը հրամայել է ֆրանսիական հիւպատոսին պաշտպանել հայերին և հրամանագր է տուել Բ. Պոլսի դեսպանին գործել համաձայնութեամբ իր միւս պաշտպանիցների հետ և հրաւիրել Բ. Դրան իր պարտականութեան կատարման: Վերջացնելով իր խօսքը, Դիլկասէ ասաց, որ Բ. Դրանը թող չը կարծէ, ինչպէս Մակեդոնիայի, նոյնպէս և Հայաստանի վերաբերմամբ, պիտի կարողանայ փախուստ տալով անպատիժ մնալ:

«ՄՇԱԿԻ» ՀՆՈԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՄԱՅ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

8 յունիսի

ԽԱՐԲԻՆ (Սեփ. թղթ.): Պորտ-Արտուրում մինչև մայիսի 26-ը ամեն ինչ խաղաղ է: Պաշարումը չէ փոխել սովորական կեանքը: Ամեն մարդ զբաղված է իր գործով. տօն օրերին մուգիկան ածում է զբօսալայրում, ուր հաւաքվում են Արտուրի և Դանիի գուլարթ ընտելիները: «Ինտելեկտը» և «Ցեսարիլի» պատրաստ են և մտել են էսկադրայի կազմի մէջ: «Պրեսանտէն» պատրաստ կը լինի յունիսի սկզբներին: «Ноб. Край» լրագիրը հրատարակվում է առանց մի օր բաց թողնելու, սակայն իր օրինակների լիակատար թիւը, որպէսզի բաւականութիւն տայ իր բաժանորդներին պաշարումը վերացնելու օրը:

ՆԻԻ-ԵՕՐԻ: Կոմս Կասսինին առաջարկեց պետական բարոյութար ձէյին, որ՝ աչքի առաջ ունենալով Չինաստանի և Միացեալ-Նահանգների յայտարարած չէզոքութեանը, դարձնել եւրոպական դեսպան Տակախիլի ուղարկութիւնը այն կենացի վրա, որ առաջարկել է ծովային կցորդ կապիտան Տակեխիտան մայիսի 28-ին ամերիկական ասիական ընկերութեան ճաշի ժամանակ, որին ներկայ էր չինական իշխան Պուլունը: Տակեխիտան կոչել է «Բանդայ», որ նշանակում է «յաղթութիւն»: Կենացն ընդունվել է ծափահարութիւններով: Կոմս Կասսինին յայտարարեց, որ եթէ ուսական դեսպանատան անդամներից մէկը թոյլ տար իրան այդպիսի բան, նա 24 ժամում կը հեռանայ նրան երկրի սահմաններից:

10-10-00: Համայնքների ժողով: Հնդկական գործերի պետական-քարտուղար Բրոդբերկը եղած հարցադրումի առիթով յայտնեց, որ բրիտանական կառավարութիւնը համաձայնվեց նշանակել յունիսի 12-ին իւր ժամանակամիջոց, երբ տիրէտեան արշաւախումբը լիա-

զօրութիւն ունի շարժվել դէպի Լիսսոս, եթէ տիրէտեանները մինչև այդ ժամանակը չեն ուղարկել ձեռնհաս մի միջնորդ չինական ամբանին հետ միասին: Յետագայ հարցադրումների առիթով Բրոդբերկը յայտնեց, որ արշաւախումբի օժանդակներն արդէն բաւական առաջ են շարժվել դէպի Դիանգզոն: Յետոյ Բրոդբերկը յայտարարեց, որ Ռուսաստանը տեղեկ է Անգլիայի ընդհանուր քաղաքական տեսակէտներին: Իսկ գրադրութեան հրատարակութիւնը հաղել թէ յարմար լինի և ներկայումս անտեղի է: Արտաքին գործերի մինիստրը ռուս դեսպանին մանրամասնաբար ամեն ինչի մասին տեղեկացրեց, ինչ որ արել է բրիտանական կառավարութիւնը:

ՄԱՐԻՆԻ: Ռուսիականութիւնը ձերբակալել է մի մարդու, որը դիտարկութիւն է ցոյց տուել պաշտպանի մինիստր-նախագահ Մաուրային:

ՉԻԿԱՅԻ: Ռուզվելտի հանրապետութեան նախագահի ընտրվելը համարվում է ապահոված:

9 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Փոխ-ծովագետ Սկրիպովի հետազոտող Նորին-Մեծութեան, 1904 թ-ի յունիսի 8-ից. «Ամենահպարտագոյն զինուցանում եմ Ձեր Կայսերական Մեծութեան հետեւալը. մայիսի 30-ին եւրոպական բանակի ծովային հարդարակցութիւնների դէմ գործելու համար մենք կը յայտնենք խուճը՝ կազմված «Րօսիա» կը յայտնենք—փոխ-ծովագետ Բեզորազովի զօրակի տակ: «Գրոմօր» և «Րիւրիկ» կը յայտնենք: Յունիսի լոյս 7-ի դիւրը նաւախումբը վերադարձաւ Վլադիվոստոկ: Իր արշաւախումբի մասին նաւախումբի հրամանատարը զեկուցանում է. յունիսի 2-ի առաւօտեան նաւախումբը հիւսիսից մօտեցաւ Սիմոնկիի նեղուցին և գտնվում էր նրանից 20 մղոն հեռավորութեան վրա, երբ նկատեց ձորից մի վրա շարժվող երկու նաւեր, որոնց ետեւից ընկան, բայց չը կարողացան հասնել հեռավորութեան պատճառով: Նոյն ժամանակ երեւաց և մի երրորդ նաւ, որին բռնելու յանձնվեց «Գրոմօր» կը յայտնենք: Այդ շրջանաւոր, որ յետոյ դուրս եկաւ «Երգումատու» փոխադրանաւը կանգ չառաւ, չը նայելով բոլոր պահանջներին, մինչև որ նրա վրա չընկան մի քանի ուռներ, դրանից յետոյ նա կանգնեց: Մարդիկ սկսեցին նրա վրայից շուրջ թափել իրանց: «Գրոմօր» մի ազդեցունով պահանջեց մարդիկնեցին թողնել նաւը, որ և կատարեցին երկու մակոյկներով, իսկ շրջում լողացողներին հաւաքեց կը յայտնեն շրջաշարժ մակոյկը և առան «Գրոմօր» վրա. իսկ «Երգումատու» փոխադրանաւը՝ 3000-ից աւելի տօնն տարողութիւնով, որ պարապում էր պատերազմի վայրը մարդիկ և բեռներ կը կրէին, ընկղմեցին թնդանօթի հաւաքածներով: Փոխադրանաւից կը յայտնեն վրա ընդունված 105 մարդուց 17-ը օֆիցեր էին: Ընկղմելով «Երգումատու» փոխադրանաւը, «Գրոմօր» նկատեցին երկու շրջանաւոր և, որոնց վրա և նա սլացաւ: Երեւաց, որ դրանք «Սատուարու» և «Ուրտալուարու» փոխադրանաւերն են, իւրաքանչիւրը մօտ 6000 տօնն նշանակված ծաւալով: Փոխադրանաւերի վրա, բացի պատերազմական բեռներից, առաջինի վրա երեւացին հեռագրական վարչութեան վարպետներ 12 օֆիցերներով, ձիեր և փամփուշտներ, իսկ երկրորդի վրա՝ 1,000-ից աւելի զինուոր և զինուորական բեռներ: «Սատուարու» տիրել յանձնվեց «Րօսիա» կը յայտնեն, իսկ «Ուրտալուարու» բռնելը՝ «Գրոմօր»-ի, որից «Ուրտալուարու» աշխատում էր փակել, թէ մի քանի նախադրուշական թնդանօթաձուլութիւն եղաւ փոխադրանաւի վրա և ազդանշան տրվեց մարդկանց և միայն ստիպողական հրաձգութիւնից յետոյ սկսեց վայր իջնել մակոյկները: Փոխադրանաւը շատ դանդաղ ընկղմեց, որի պատճառով «Գրոմօր» հրամայվեց շտապել ընկղմել շրջանաւոր, որ և իսկոյն կատարեց կը յայտնեն: «Րօսիա» կը յայտնեն հալածված «Սատուարու», մի քանի հրաձգութիւն ստանալով, կանգ առաւ և ազդանշանի համեմատ սկսեց իջնել մակոյկները, որ նրա վրա առանձնապէս շատ էին: Մակոյկներն իջեցնում էին շտապով, մի քանիսը շուտ եկան, մնացածներն իրանց վրա առան խոշոր թուով մարդիկ և զինեցին դէպի հեռավորութեան Տօնուրի և Իկիսիմա կղզիները: Եղանակը հանդիսատէս էր և ծովը բոլորովին խաղաղ: «Րիւրիկ» կը յայտնեն հրամայվեց իր վրա առնել օֆիցերներին, զինուորական և ծառայողներին, բայց բոլորի մի-

ջից երեւաց, որ նաւերի վրա ծառայող միայն 4 օտարականներն և 25 օֆիցերներն էին: Եւրոպական ֆոխադրանաւը չը թողին. այն ժամանակ «Րիւրիկ» կը յայտնեն հրաման տրվեց ընկղմել շրջանաւոր ահանեցրով: Առաջին պայթիւնից փոխադրանաւը չընկղմեց, որի պատճառով հրամայվեց թողնել երկրորդ ահանը, որից նաւն սկսեց սուզվել: Փոխադրանաւի գործը վերջացած համար, նաւախումբը շարժվեց առաջ: Սանարեան նեղուցի ճանապարհին հանդիպեց անգլիական «Ալլատոն» շրջանաւոր: Նրան խուզարկելու համար ուղարկված օֆիցերին նաւապետը յայտնեց, որ Մուրօրանից Միւլագուր է գնում 6,500 տօնն ածուխ վրան: Մուլագուրների հարց ու փորձը, զօկումներների ընդունութիւնը և պահապանների օրագրի անկարգութիւնը նաւի նախկին գործունեութեան հետ միասին եւրոպայի համար մագաններգ իրեր տեղափոխելու վերաբերութեամբ, ստիպեցին կասկածել նրա բեռի չեղոքութեան մասին և ստիպեցին ուղարկել նրան Վլադիվոստոկ Պետրով 10-ը լէյտենանտ: Հրամանատարութեամբ զինուորական պահապաններ հետ դնելով, որպէս զի այնտեղի մագաններգութեան դատարանում այդ նաւի գործը քննեն: Բացի այդ շրջանաւոր, նաւախումբն այլ ևս ուրիշ նաւ չը հանդիպեց իր շարժումների ժամանակ: Եւրոպական վրա երեւաց մէկ եւրոպականաւոր ինտելիգենտ մարդ, որ, ինչպէս երևում է, չէր պատկանում նաւի ծառայողների կազմին:—Յունիսի 7-ին Թագաւոր Կայսրի, Մեծ Բրիտան Թագաւորանգի, Մեծ Բրիտանների, միւնիստրների և զենեքալիտէտի ներկայութեամբ Սէրգիեյսկի միաստանում կատարվեց գենեռալ-ադիւտանտ Բօրիսկովի թաղումը:

ԿՕՎՆՕ: Վերվոյի հրդեհից ֆլամաւորները սաստիկ խեղճութեան մէջ են. այրվել են մօտ 1000 շէնքեր. 1500 ընտանիք առանց յարկի է մնացել. հարկաւոր է անմիջական մեծ օգնութիւն: Օգնութիւնը կարելի է ուղարկել հրդեհից ֆլամաւորների օգնելու նահանգաւոր կօմիտէին, որ հիմնվել է երկրի պետի թղթաւորութիւնով՝ նահանգապետի նախագահութեամբ:

ՎԻՆՆԱ: Մարաշխտ Շարիր փաշան կայսրին յանձնեց սուլթանի ինքնահեռագիր նամակ և շարանները:

ԳԻՐԲԱՆՍԱՐ: Լիսաբօնից ժամանած ամերիկական էսկադրան յունիսի 9-ին կը գնաց Պերվի:

ՊԻՍԿ: Ժամանեց ոտով ճանապարհորդող ֆրանսիացի էսկալը, որ 1899 թուից ոտով առանց փողի շրջում է աշխարհի շուրջը: Էսկալը եղել է աշխարհի 3 մասերում և ուղեւորվում է Սիբիր:

ՄՕՄՎԱ: Գեղարուեստական-արդիւնաւոր ծաւան մուգնուսին կից կազմակերպվում է մի նոր ընկերութիւն ազգաբնակչութեան մէջ գեղարուեստական-արդիւնաւորական գիտելիքներ տարածելու համար:—Կենդանաբանական պարտէզում սարքվում է ագնիւ տեսակի կենդանիների և թռչունների մշտական ցուցահանդէս:

9 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Գեներալ Յուզի հեռագիրը Մուլագուրից. «Փոխադրայի շտաբում գտնվող զինուորական ցինդուրան խնդրում է բոլոր լրագրիչներին, որոնք սեփական թղթակիցներ ունեն պատերազմական գործողութիւնները բեռնում, աւելի ճշգրէ կատարել իրանց պարտականութիւնը, այն է՝ ուղարկել փոխադրայի շտաբ երկու-երկու օրինակ այն լրագրիչների համարներից, որտեղ տրված կը լինեն թղթակցութիւններ: Եթէ փոխադրայի շտաբում այդ օրինակները մինչև յունիսի 7-ը չը ստացվեն, այն ժամանակ օրէնքները խախտու պատճառով ցինդուրան ստիպված կը լինի համապատասխան թղթակիցներին արգելել թղթակցելը, մինչև որ ստացվեն նրանց լրագրիչները:

ՆԻԻ-ԵՕՐԻ: «Ուրուգ» լրագիրը հեռագրով տեղեկութիւն է ստացել, որ թերթի թղթաւորից գնդապետ Էմբրօնը, որը գտնվում էր արեւելեան Ասիայում, գնդապետ է արված յետ նահանգի ուսանողի կողմից: Վերջինից նրան սխալմամբ լրտեսի տեղ են ընդունել:

ՄՕՅԻԱ: (Դիմադրել շրջաններից): Ճիշտ չէ այն լուրը, թէ Յօնիկը և Եւսիկովը գնալու են Մակեդոնիա. նրանք մնում են Սօֆիայում և խորհուրդ են տալիս մակեդոնացիներին հանգստութիւն պահպանել: Թիւրք կառավարութիւնը մտադրել է համաձայնել, որ թիւրքական վիլայէթներում ապրող բոլարներին բա-

Типографія «ГЕРМЕСЪ» С. Назарянца, М. х. пр. № 81